ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

16 մարտի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

36
(2886)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԻՍՏԻ Է ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները հաջորդ շաբաթ փակ նիստ կանեն:

Ինչպես հայտնել ենք, հաջորդ շաբաթ խորհրդարան են գնալու Նիկոլ Փաշինյանն ու գործադիրի մյուս անդամները:

Վարչապետն ու նախարարները ներկայացնելու են Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 2023 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին զեկույցը:

ԱԺ նիստերից առաջ՝ երկուշաբթի օրը, ՔՊ խմբակցությունը փակ նիստ կանի:

Իշխանական պատգամավորների մոտ իրարանցում է. պատրաստվում են, որպեսզի պատշաճ դիմավորեն ու ճանապարհեն Փաշինյանին:

Ահա երկուշաբթի օրը եւս մեկ անգամ ՔՊ-ական պատգամավորները կհավաքվեն, որպեսզի, այսպես ասած, դերաբաշխում անեն ու նախապես որոշեն, թե որ պատգամավորը ինչ հարց պետք է ուղղի Փաշինյանին, ինչ ելույթ պետք է ունենա, ինչպես նաեւ խմբակցության ղեկավարների կողմից համապատասխան ցուցումներ ստանան:

Բանն այն է, որ ամեն անգամ Փաշինյանի՝ խորհրդարան գնալը իշխանական պատգամավորների մոտ իրարանցում է առաջացնում. եթե, օրինակ, սովորական նիստերի ժամանակ նրանց մեծ մասը գալիս, գրանցում ու դուրս է գալիս նիստերից, ապա Փաշինյանի գալու դեպքում միայն ու միայն ընդմիջումների ժամանակ է թույլատրվում դուրս գալ դալիճից:

Իսկ նիստի ժամանակ Փաշինյանին կարելի է ուղղել միայն նախապես մշակված ու սերտած հարցեր, որոնք նախապես բաժանվում են պատգամավորներին, եւ որոնց արդեն պատրաստ է Փաշինյանը:



ՀՀ արտգործնախարար Արարատ Միրզոյանի եւ ՔՊ-ական պատգամավորների հարաբերությունները տեւական լարվածությունից հետո կարգավորվել են: Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, երեկ Արարատ Միրզոյանը գնացել էր խորհրդարան՝ ՀՀ կառավարության ծրագրի 2023 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին զեկույցը ներկայացնելու: Մեր տեղեկություններով՝ ՔՊ-ական պատգամավորները, ի տարբերություն նախորդ անգամների, բավականին լավ են ընդունել Միրզոյանին, նրա հետ զրուցել, հարցեր են քննարկել՝ առանց քամահրանքի ու ագրեսիայի: Այսինքն՝ Միրզոյանին հաջողվել է հարաբերությունները կարգավորել թիմակիցների հետ, ու նախկին լարվածությունն այլեւս չկա:

Դատական համակարգում ՍԴ դատավորի նոր հավանական թեկնածուի անուն է շրջանառվում: Մասնավորապես, դատական համակարգում կարծիքներ են հնչել, որ իր թեկնածությունը առաջադրի ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Արսեն Նիկողոսյանը: Մեզ հասած լուրերի համաձայն՝ դատական համակարգը վերջինիս հնարավոր առաջադրումը դրական է ընդունել, բայց դեռ վերջնական որոշում չկա: Հիշեցնենք՝ քանի որ իշխող ուժը՝ ՔՊ-ն, ԱԺ-ում բոյկոտեց ՍԴ դատավորի պաշտոնում Դատավորների ընդհանուր ժողովի կողմից առաջադրված Դավիթ Բալայանի թեկնածության քվեարկությունը, դատավորները էլի պետք է հավաքվեն, կրկին պիտի ՍԴ դատավորի թեկնածու ընտրեն եւ ուղարկեն ԱԺ-ի հաստատմանը: Դատական համակարգում ակտիվ քննարկում են, թե ում ընտրեն, որ ՔՊ-ի սրտով լինի: Քաղաքական իշխանությունը իր «սրտի» թեկնածուին է փորձում առաջ տանել, իսկ դատական համակարգը չի հանձնվում եւ ամեն գնով իր թեկնածուին է առաջ տանելու: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ չի բացառվում, որ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի եղբայրը՝ Դավիթ Խաչատուրյանը, կրկին առաջադրվի, որին դատավորները մի անգամ արդեն մերժել էին:



ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ 2024 թվականի հունվարին հրապարակած՝ ՀՀ մահացությունն ըստ մահվան հիմնական պատճառների (աղբյուրը՝ մահվան բժշկական վկայականների հիմքով կազմված քաղաքացիական կացության մահվան վերաբերյալ ակտերի գրանցումները) մասին վիճակագրության համաձայն՝ մարդկանց մահացություններն ամենաշատը գրանցվում են արյան շրջանառության հիվանդություններից: 2023 թվականին այս հիվանդությունից մահացել է 1 375 մարդ, իսկ 2024-ին՝ 1488 մարդ, այսինքն՝ 113 մարդով ավելի: Մահացության պատճառների շարքի 2-րդ հորիզոնականում է նորագոյացությունից մահերը: Այստեղ եւս մահացությունների թվերը կրկին աճում են. 2023 թվականին դրանք կազմել են 446 մարդ, իսկ 2024 թվականին՝ 460 մարդ. այստեղ եւս աճ է գրանցվել (14 մարդ): Երրորդ հորիզոնականում շնչառական օրգանների հիվանդություններով պայմանավորված մահերն են: Նախորդ տարի այս ախտորոշմամբ մահացել է 268 մարդ: Այս դեպքում, վերջին երկու տարիների համեմատությամբ, նվազել է ցուցանիշը. այս տարվա նույն ժամանակահատվածում մահացել է 249 մարդ, այսինքն՝ 19 մարդով քիչ: Այս շարքը հաջորդում են մարսողական օրգանների հիվանդությունից, վարակիչ եւ մակաբուծային հիվանդություններից եւ այլ հիվանդություններից մահերը: Ուշագրավ է նշել, որ նախորդ տարի հունվարին Covid-19 վիրուսից մահացել էր 3 անձ, այս տարի այդ վարակից ոչ ոք չի մահացել:

ԶՐՈՒՅՑ

«ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԿԹԵԼԱԴՐՎԵՆ»

Գերիների հնարավոր վերադարձի համար արվում է ամենօրյա աշխատանք. խորհրդարանում կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ ասել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

ArmLur.am-ը կապ հաստատեց իրավապաշտպան Սիրանուշ Սահակյանի հետ՝ հասկանալու համար՝ ինչ է արվում ռազմագերիների համար, եւ ինչ փոփոխություններ կա.

«Այստեղ իրավական մասով դատական գործընթաց կա, որոնք շատ կարեւոր զսպող մեխանիզմներ են քաղաքական գործընթացների համար եւ անխուսափելի ազդեցություն ունեն: Դատական ակտերը այս պահին վերջնական ավարտված չեն, իսկ ընթացող գործընթացը դրական ազդեցություն է թողնում քաղաքական գործընթացների վրա: Քաղաքական մասով մեզ համար հստակ է, որ ազատ արձակումը ուղիղ կապված է քաղաքական պահանջների բավարարման հետ, եւ, առանց որոշակի պահանջների բավարարման, Ադրբեջանը չի իրականացնում իր միջազգային պարտավորությունները կամ այն հանձնառությունները, որոնք ամրագրված են իրավաքաղաքական փաստաթղթերում, եւ, առանց հայկական կողմի զիջումների, մեծ հաշվով հայրենադարձում տեղի չի ունենում, եւ հայկական կողմը կարծես թե ընդունել է խաղի այս կանոնները, որ ազատ արձակումը պետք է ապահովվի զիջումների վրա, եւ ինքնուրույն լծակներ չի գործադրում միակողմանի մարդասիրական պարտավորությունների կատարումը երաշխավորելու նպատակով»:

Սիրանուշ Սահակյանի խոսքով՝ Հայաստանը հիմա ակնկալիքներ չունի, որ կարճաժամկետ հեռանկարում ռազմագերիների ազատ արձակում կլինի:

Ազատ արձակումը կապված է լինելու խաղաղության պայմանագրի դրույթների համաձայնեցման եւ կնքման հետ:

«Ադրբեջանի կողմից ընդունելի խաղաղության պայմանները կթելադրվեն, եւ փաստաթղթեր կստորագրվեն. սա մենք ուղիղ կապակցում ենք խաղաղության շուրջ գործընթացների հետ եւ այդ գործընթացների եզրափակումը իրատեսական չենք համարում այս թիմի հայրենադարձման համար»,-ասում է իրավապաշտպանը:

Նրա կարծիքով՝ Ադրբեջանի պահանջը, ըստ որի՝ Հայաստանը պետք է հետ վերցներ հայցերը միջազգային կառույցներից, չի նպաստի գերիների վերադարձման գործընթացին, որովհետեւ Հայաստանը շատ լուրջ երաշխիքներ պետք է ունենա, որպեսզի այդ փաստաթղթերի ստորագրումից հետո հրաժարվի հայցերից:

«Ադրբեջանը միանշանակ խախտել եւ խախտում է իր պայմանավորվածությունները՝ դրանք լինեն քաղաքական մակարդակում, թե միջազգային իրավական փաստաթղթերում»,-հավելում է իրավապաշտպանը:

Հիշեցնենք, որ հայկական կողմի տվյալներով՝ Ադրբեջանում 54 հայ գերի կա, նրանցից 16-ը գերեվարվել են սեպտեմբերի 19-ի պատերազմից հետո, նրանց թվում են արցախցի նախկին ու ներկա բարձրաստիճան պաշտոնյաներ, զինվորականներ:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԸՆՏՐՎԵԼ Է ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՈՂ

ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը մասնակցել եւ ելույթով է հանդես ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի Կայուն զարգացման նպատակների տարածաշրջանային ֆորումին: Բացման հանդիսավոր արարողությանը ՀՀ ԱԳ նախարարի տեղակալը ընտրվել է ֆորումի համանախագահող:

Ընդգծվել է, որ որպես դեպի ծով ելք չունեցող զարգացող երկիր՝ Հայաստանը գիտակցում է ներառական փոխկապակցվածության, բաց սահմանների, համապարփակ գործող ճանապարհների եւ տրանսպորտային ենթակառուցվածքների կենսական կարեւորությունը: Այդ համատեքստում ԱԳ նախարարի տեղակալը ներկայացրել է Հայաստանի կառավարության կողմից ներկայացված «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությունը:

ԿՋՆ տարածաշրջանային ֆորումի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարարի տեղակալը հանդիպումներ է ունեցել ՄԱԿ գլխավոր քարտուղարի առաջին տեղակալ Ամինա Մոհամմեդի, ՄԱԿ գլխավոր քարտուղարի փոխտեղակալ, ՄԱԶԾ Եվրոպայի եւ ԱՊՀ տարածաշրջանի բյորոյի տնօրեն Իվանա Ժիվկովիչի եւ Չեխիայի տարածաշրջանային զարգացման նախարարի տեղակալ Ռադիմ Սրշենի հետ:

Հանդիպումների ընթացքում ՀՀ ԱԳ նախարարի տեղակալն անդրադարձել է Հայաստանում Կայուն զարգացման 2030 օրակարգի եւ կառավարության բարեփոխումների օրակարգի իրականացման ուղղությամբ կառավարության կողմից կատարված աշխատանքներին: Կարեւորվել է ՄԱԿ քարտուղարության եւ համապատասխան գործակալությունների ու գործընկեր պետությունների հետ ակտիվ համագործակցությունը Հայաստանի կայուն սոցիալ-տնտեսական առաջընթացի ապահովմանեւ մարդկային ներուժի զարգացման ուղղությամբ:

ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է

«ՀայՓոստը» հայտարարություն է տարածել՝ զգուշացնելով՝ չվստահել կեղծ էջերին եւ որեւէ անձնական տվյալ չտրամադրել:

«Ահազանգեր ենք ստանում, որ խարդախները կրկին «ՀայՓոստի» անունն են շահարկում:

Այս անգամ քաղաքացիները հաղորդագրություններ են ստանում, իբրեւ թե, «ՀայՓոստի» անունից, որոնցում նշվում է, իբր, իրենց ծանրոցը հասել է պահեստ, սակայն չի կարող առաքվել՝ հասցեի ոչ ամբողջական տեղեկատվության համար, ապա խնդրում են 12 ժամվա ընթացքում հաստատել իրենց հասցեն՝ անցնելով իրենց տրամադրած կեղծ հղումով:

Հայտնում ենք, որ «ՀայՓոստը» տվյալ հաղորդագրությունների հետ որեւէ առնչություն չունի: Հորդորում ենք քաղաքացիներին ուշադրություն դարձնել, թե ինչ հեռախոսահամարից են ստանում տվյալ հաղորդագրությունը, ինչպես նաեւ կայքի հղումին, որը կրկին ոչ պաշտոնական է:

Հարգելի՛ հաճախորդներ, խնդրում ենք չվստահել կեղծ էջերին եւ որեւէ անձնական տվյալ չտրամադրել, չանցնել անհայտ հղումներով:

Հավելենք, որ «ՀայՓոստի» հաճախորդներն առաքանիի մասին հաղորդագրություն են ստանում պաշտոնական հեռախոսահամարից, երբ իրենց առաքանին փոստային բաժանմունքում է:

Հաղորդագրության մեջ կցվում է նաեւ պաշտոնական հղում, որի միջոցով կարող են առաքում պատվիրել:

«ՀայՓոստի» ծառայությունների ու առաջարկների վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար հորդորում ենք օգտվել բացառապես պաշտոնական աղբյուրներից»,- ասված է հայտարարության մեջ:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 183

2018թ. մայիսի 5-ին Նիկոլ Փաշինյանը Հանրապետության հրապարակում հրապարակավ խոստացավ. «Հայաստանում հեղափոխական տեմպերով պետք է զարգացնել գյուղատնտեսությունը: Նոր տեխնոլոգիաների կիրառումը պետք է լայնորեն տարածվի նաեւ գյուղատնտեսության ոլորտում՝ այս պարագայում էլ որպես ռազմավարական նպատակ ունենալով չմշակվող գյուղատնտեսական հողերի թվի շեշտակի նվազումը եւ, ի վերջո, այդպիսի հողերի գոյության բացառումը»: «Ժողովուրդ» օրաթերթը, համադրելով պաշտոնական տեղեկությունները, պարզեց, որ իրականում Հայաստանում գյուղատնտեսությունն անկում է ապրում տարեցտարի: Արդեն մի քանի տարի է՝ տնտեսական աճի պատկերում այս ոլորտի դիմաց տոկոսը 0-ից ցածր է: Ինչ վերաբերում է «չմշակվող գյուղատնտեսական հողերի գոյության բացառմանը», Նիկոլ Փաշինյանը 28.04.2021թ. արձանագրեց, որ Հայաստանում վարելահողերի 50%-ից ավելին չի մշակվում, իսկ 74%-ը չի ոռոգվում:

«ԽՈՍՔԻ ՏԵՐԸ ՉԵՆ ԵՂԵԼ»

Մարտի 15-ին ԱԺ-ում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հայտարարեց, որ ՀՀ-ի որեւէ պաշտոնյա իրավունք չունի վարելու որեւէ բանակցություն ոչ միայն Տավուշի մարզի, այլեւ ՀՀ տարածքից որեւէ բան որեւէ մեկին հանձնելու վերաբերյալ: «Մենք Տավուշի մարզի գյուղերը հանձնելու վերաբերյալ չենք բանակցում»-նշել է նա: ԱԳ նախարարի խոսքով՝ ՀՀ-ն ու Թուրքիան այժմ արձանագրություններ են փոխանակում Անիի պատմական կամրջի համատեղ վերանորոգման մասով: ՀՀ-ն որոշակիորեն սառեցրել է մասնակցությունը ՀԱՊԿ-ին, քանի դեռ հայկական կողմի բարձրացրած հարցերի պատասխանները չեն ստացվել: ՀՀ-ի համար մինչեւ այս պահն անհասկանալի է, թե ինչպես են պատկերացնում ՀԱՊԿ-ի գործընկերները Հարավային Կովկասում իրենց պատասխանատվության գոտին: ArmLur.am-ը կապ հաստատեց քաղաքագետ Ստեփան Դանիլյանի հետ մեկնաբանություն ստանալու նպատակով. «Մենք տարիների ընթացքում բազմաթիվ պատճառներ ունենք չհավատալու իրանց, շատ դեպքերում խաբել են, իրենց խոսքի տերը չեն եղել, ասել մեկ բան, մեկ այլ բան է կատարվել: Դա արձանագրելով՝ կարելի է ասել, որ իրեն խոսքերը որեւէ հիմք չեն ներկայացնում ճշմարտությունը իմանալու համար»:

ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է ծրագիր, որի միջոցով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածները կարող են ուսում ստանալ եւ աշխատանքի անցնել պետական աջակցությամբ: Այդ մասին ծրագիրը Կառավարության հումանիտար կենտրոնում ասուլիսի ժամանակ ներկայացրեց ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը:

Առաջին բաղադրիչի համար նախատեսված է, որ պետությունը տրամադրում է ուսման վարձի փոխհատուցում եւ կրթաթոշակ, յուրաքանչյուրի համար՝ 50-հազարանոց դրամ: Ուսուցումը կարող է տեւել մինչ— 6 ամիս, որից հետո աշխատանքային պայմանագիր է կնքվում առնվազն 3 ամսով, եւ պետությունը գործատուին փոխհատուցում է մինչեւ 50 հազար դրամի չափով եկամտային հարկ եւ այլ պահումներ:

Երկրորդ բաղադրիչով մինչեւ 3 ամիս տեւողությամբ յուրաքանչյուր ամիս 165 հազար դրամի չափով աշխատավարձի գումար է փոխհատուցվում գործատուին, որի մեջ ներառված են հարկերը, որից հետո եւս 3 ամիս պետությունը փոխհատուցում է եկամտային հարկի՝ մինչեւ 50 հազար դրամը՝ եւս 3 ամիս: Այս պարագայում նվազագույն աշխատանքային պայմանագրի տեւողությունը առնվազն 6 ամիս է:

Երրորդ բաղադրիչն առաջին եւ երկրորդ բաղադրիչների համադրությունն է, այսինքն՝ առկա է մասնագիտական ուսուցման բաղադրիչ, աշխատանքային փորձի եւ հարկերի փոխհատուցման:

«Ծրագրով հետաքրքրվողների թիվը 1000-ից ավելի է, առկա պայմանագրերի թիվը՝133»,- ասաց նախարարի տեղակալը:

«ՀԵՔԻԱԹ Է ՊԱՏՄԵԼ»

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւն ընդունել է ՄԱԿ-ի (ՄԱԿ) Գլխավոր ասամբլեայի 78-րդ նստաշրջանի նախագահ Դենիս Ֆրենսիսին եւ նրան հեքիաթ պատմել՝ խեղաթյուրելով Լեռնային Ղարաբաղի ագրեսիայի եւ օկուպացիայի իրադարձությունները:

Ինչպես հաղորդում է ԱՊԱ-ն, Ալիեւը վստահեցրել է իր զրուցակցին խաղաղության օրակարգին Ադրբեջանի հավատարմության մասին՝ասելով, որ կողմերի միջեւ բանակցություններ են ընթանում խաղաղության պայմանագրի տեքստի շուրջ:

Նրա խոսքով՝ Ադրբեջանում COP29-ի անցկացման շուրջ Արեւելյան Եվրոպայի խմբում կոնսենսուսի ձեռքբերումն ինքնին խաղաղության օրակարգի անբաժանելի մասն է: «Այսպես, Ադրբեջանը պաշտպանել է Հայաստանի թեկնածությունը՝ անդամակցելու ՀԱՊ Բյուրոյին Արեւելյան Եվրոպայի խմբից, իսկ Հայաստանը սատարել է Ադրբեջանի թեկնածությանը՝ հյուրընկալելու COP29-ը, զինվորականներն ազատվել են փոխադարձ հիմունքներով, ինչը խաղաղության օրակարգին ծառայող պահ է: Իլհամ Ալիեւն ասել է, որ Ադրբեջանը վերջ դրեց հայկական օկուպացիային՝օգտագործելով ինքնապաշտպանության իրավունքը՝ ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածի համաձայն, եւ դրա արդյունքում այսօր տարածաշրջանն ավելի քան երբեւէ մոտ է խաղաղությանը»,- մեջբերում է ՔԼՄ-ն:

Այդպիսով, թերեւս ամենաազդեցիկ միջազգային կազմակերպության ներկայացուցիչը, ավերված եւ օկուպացված Լեռնային Ղարաբաղում իրենց տներից վտարված հայ բնակչության իրավունքների պաշտպանության համար իրականում աշխատելու փոխարեն, լսում էր հեքիաթներ, ասես ոչինչ էլ չի եղել:

ՊԱՐՔԱԲԱՆՈՒՄ

ՀՀ–Ն ԻՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ Է ՈՒԶՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունն առաջնորդվում է պետական շահով եւ իր անվտանգությունն է ուզում. ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նիստում այս մասին ասաց Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը՝ պատասխանելով «Հայաստան» խմբակցության պատգամավոր Ագնեսա Խամոյանի հարցին, թե, ի վերջո, Հայաստանը ՀԱՊԿ-ից ինչ է ուզում:

«Մենք ոչ մեկից ոչ մի բան չենք ուզում, մենք առաջնորդվում ենք Հայաստանի Հանրապետության շահով, մենք Հայաստանի Հանրապետության անվտանգությունն ենք ուզում. սա է այն մոտիվացիան, որով անդամակցել ենք ՀԱՊԿ-ին, սա է այն ընկալումն ու ակնկալիքը, որն ունեցել ենք ՀԱՊԿ-ից:

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունից այլ բան, քան մեր սահմանների անվտանգությունը, չենք ուզում եւ չենք էլ կարող ուզել, եւ պետք էլ չէ»,- ընդգծեց Միրզոյանը:

Նրա խոսքով՝երբ տեղի էր ունեցել Հայաստանի ինքնիշխան տարածքի վրա հարձակում, Հայաստանը դիմել էր ՀԱՊԿ գործընկերներին, որպեսզի նրանք նախ փաստեին, որ խախտվել է ՀՀ-ի տարածքային ամբողջականությունը, սահմանները ոտնահարվել են: Այնուհետեւ, ըստ Միրզոյանի, Հայաստանը ակնկալել է, որ ՀԱՊԿ անդամ ընկերները դաշնակցաբար, քաղաքական եւ դիվանագիտական ճանապարհներով կփորձեն լուծել խնդիրը եւ կպաշտպանեն Հայաստանի տարածքային ամբողջականությունը:

«Եթե այդ ճանապարհով չստացվեր (սրա մասին կոնկրետ խոսակցություն չի էլ գնացել, տեսականորեն եմ ասում), Դաշինքի անդամները պարտավոր էին ռազմական ճանապարհով իրար աջակցություն հայտնել: Առաջին ակնկալիքի դեպքում անգամ ՀԱՊԿ-ի հետ խնդիր ենք ունեցել, էլ չեմ ասում երկրորդ եւ երրորդի մասով: Մենք ակնկալել ենք, որ առնվազն մեր դաշնակիցները ընդունեն, որ այ՛ն, ձեր սահմանների վրա տեղի է ունեցել հարձակում»,- եզրափակեց Միրզոյանը:

«Արեւմուտքի, օրինակ՝ Եվրամիության հետ Հայաստանի հարաբերությունների խորացումը նպատակ չունի Ռուսաստանի հետ հարաբերություններն ի չիք դարձնել»,-վստահեցրեց Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նիստում՝ անդրադառնալով «Հայաստան» խմբակցության պատգամավոր Լեւոն Քոչարյանի մտավախությանը, թե այդ համագործակցությունը գուցե ռազմավարական դաշնակցի դեմ է:

«Ես պաշտոնապես հայտարարում եմ, որ Հայաստանի Հանրապետությունը որեւէ մեկի դեմ որեւէ մի ծրագրում ներգրավված չէ: Արեւմուտքի հետ, օրինակ՝ ԵՄ-ի հետ մեր հարաբերությունների խորացումն ուղղված չէ ՌԴ-ի դեմ, նպատակ չունի այդ հարաբերություններն ի չիք դարձնել, նույնիսկ նպատակ չունի հարեւանների դեմ օգտագործել»,-ասաց Միրզոյանը:

Նա վստահեցրեց, որ այդ հարաբերությունների խորացման նպատակը միայն ՀՀ անվտանգության բարձրացումն է՝ ոչ որեւէ մեկի դեմ:

Արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը ներկայացրեց, թե ինչու է Ալմա-Աթայի հռչակագիրը դարձել Հայաստան-Ադրբեջան խաղաղ բանակցությունների հիմք:

«Ալմա-Աթայի հռչակագիրն ընտրվել է, որովհետեւ սա այն առաջին եւ հիմնական փաստաթուղթն է, որտեղ Ադրբեջանը եւ Հայաստանը փոխադարձաբար ճանաչել են միմյանց տարածքային ամբողջականությունը 1991 թվականի սահմաններով»,- ասաց Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը:

«Ադրբեջանի հետ բանակցություններն առաջին օրվանից եղել են տարածքներ զիջելու վերաբերյալ»,-ասաց Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նիստում՝ անդրադառնալով «Հայաստան» խմբակցության պատգամավոր Աննա Գրիգորյանի հարցին:

Աննա Գրիգորյանն Արարատ Միրզոյանին խնդրեց մեկնաբանել Ալիեւի հայտարարությունն այն մասին, թե 2018-ին Հայաստանում իշխանության եկած կառավարությունը խոստացել է գնալ տարածքային զիջումների:

«Հայաստանի բոլոր իշխանությունները միշտ բանակցել են որոշակի տարածքներ զիջելու վերաբերյալ: Դրանք եղել են տարածքներ զիջելու բանակցություններ: Չգիտեմ, թե ով, ինչ, որ փուլում, որ պատմական պահին ինչ շահ է ունեցել այլ բան ասելու ՀՀ հանրությանը, բայց կարծում եմ, որ բոլորը արդեն կարող են ակնհայտորեն հասկանալ, որ այդ բանակցություններն առաջին օրվանից եղել են տարածքներ զիջելու բանակցություններ»,-ասաց Միրզոյանը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊԵԿ–Ն ԱՆԴՐԱԴԱՐՁԵԼ Է

ՀՀ ՊԵԿ-ն անդրադարձել է Եկամտային հարկի վերադարձի վերաբերյալ ամենատարածված հարցերին:

«Ո՞ր դեպքում քաղաքացին կարող է օգտվել եկամտային հարկի վերադարձի հնարավորությունից». այս հարցին ի պատասխան՝ ՊԵԿ-ը տեղեկացնում է.

«Հիփոթեքային վարկով բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերած (ձեռք բերող) կամ անհատական բնակելի տուն կառուցող ֆիզիկական անձանց եկամտային հարկը վերադարձվում է հետեւյալ դեպքերում.

● եթե բնակարանը ձեռք է բերվում ՀՀ տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից,

● թե բնակարանը ձեռք է բերվում պետության կամ համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակում՝ պետությունից, համայնքից, անմիջապես կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից,

● եթե ՀՀ տարածքում ձեռք է բերվում կամ կառուցվում է անհատական բնակելի տուն»:

ԿՄԵԿՆԱՐԿԵՆ ԱԺ ՆԻՍՏԵՐԸ

Հաջորդ շաբաթ՝ մարտի 19-ից, կմեկնարկեն ԱԺ նիստերը:

Վարչապետը եւ նախարարները կգնան խորհրդարան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 2023 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին զեկույցը ներկայացնելու:

Այս շաբաթ զեկույցը քննարկվել է ԱԺ գլխադասային հանձնաժողովներում:

Armlur.am-ը տեղեկացավ, որ նիստերի օրակարգում լինելու է նաեւ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», ««Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» եւ այլ օրենքի նախագծեր:Երկուշաբթի օրը նախագծերը հաստատելու համար ԱԺ խորհուրդը նիստ կանի:

ԴԵՌԵԻՍ ՉԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾՎԵԼ Է ԾԵԾԿՌՏՈՒՔԻ

ՀՀ ՆԳՆ ոստիկանություն քաղաքացուց ահազանգ է ստացվել այն մասին, որ ինքը արնաքամ է լինում Երեւան քաղաքի Ա. Պուշկին փողոցում: Նույն օրը՝ ժամը 02:36-ին, «Մխիթար Հերացի» թիվ 1 համալսարանական հիվանդանոցից եւս ահազանգ է ստացվել, որ Ա. Պուշկին փողոցից «պոլիտրավմա» ախտորոշմամբ շտաբ օգնության խմբի կողմից իրենց մոտ է տեղափոխվել անգիտակից վիճակում գտնվող անձ: Պարզվել է, որ վերջինս Երեւան քաղաքի բնակիչ Յուրի Մինասյանն է:

Վերոգրյալի առթիվ 2024 թվականի մարտի 6-ին ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ: Յուրի Մինասյանը ճանաչվել է տուժող:

2024թ. մարտի 6-ին դեպքի վայրում՝ Երեւան քաղաքի Պուշկին 58-րդ հասցեում կատարված զննությամբ վերցվել է արնանման հետք: Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն: Նախաքննությամբ վկաների մասնակցությամբ զննության են ենթարկվել ստացված տեսագրություններ, հարցաքննվել են մի շարք անձինք, կատարվել են նաեւ այլ ապացուցողական եւ վարութային գործողություններ:

Քննությամբ պարզվել է, որ Յ. Մինասյանը մարտի 5-ին՝ ուշ երեկոյան, իր ընկերների հետ գտնվել է Երեւան քաղաքի Պուշկին փողոցում գործող «Բիթլզ» ակումբում, որտեղ տարաձայնություններ են առաջացել այնտեղ գտնվող մեկ այլ անձի՝ Երեւան քաղաքի բնակիչ Հ.Մ.-ի հետ: Պարզաբանումների նպատակով վերջիններս դուրս են եկել այնտեղից եւ գնացել Երեւան քաղաքի Փարպեցի փողոցում գտնվող Սրբ Ջորավոր եկեղեցու հետնամաս: Այնտեղ վիճաբանությունը վերածվել է ծեծկռտուքի, որի ընթացքում Հ. Մ.-ն բռունցքներով հարվածներ է հասցրել Յուրի Մինասյանի դեմքի հատվածին՝ պատճառելով ծանր զուգակցված գանգուղեղային վնասվածք՝ գանգի բազմաթիվ ոսկրերի կոտրվածքներ: Վերջինս ծայրահեղ ծանր վիճակում տեղափոխվել է հիվանդանոց:

Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ 2024թ. մարտի 9-ին վարույթ իրականացնող մարմնի կողմից միջնորդություն է ներկայացվել Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազություն՝ ենթադրյալ հանցագործություն կատարած Հ. Մ.-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով (խուլիգանական դրդումներով մեկ ուրիշին ծանր մարմնական վնաս պատճառելը) հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, որը նույն օրը բավարարվել է:

Հանձնարարություն է տրվել Ոստիկանությանը՝ Հ. Մ.-ին հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու նպատակով, սակայն վերջինս դեռեւս չի հայտնաբերվել:

2024 թվականի մարտի 14-ին «Մխիթար Հերացի» թիվ 1 համալսարանական հիվանդանոցից ստացվել է տեղեկություն, որ նույն օրը՝ ժամը 06:30-ին, հոսպիտալացված Յուրի Մինասյանը մահացել է:

Նույն օրը վարույթն իրականացնող մարմնի կողմից միջնորդություն է ներկայացվել դատախազություն՝ ենթադրյալ հանցագործություն կատարած Հ. Մ.-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ եւ 15-րդ կետով (խուլիգանական դրդումներով մեկ ուրիշին ծանր մարմնական վնաս պատճառելը, որն անզգուշությամբ առաջացրել է հանցագործությունից տուժած անձի մահ) նոր հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, որը նույն օրը բավարարվել է:

Միջնորդություն է ներկայացվել Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ:

Նախաքննությունը շարունակվում է: Միջոցներ են ձեռնարկվում Հ.Մ.-ին հայտնաբերելու, ինչպես նաեւ դեպքի հանգամանքները լիարժեք պարզելու ուղղությամբ:

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՆԵՐՔԻՆ ԽՄՈՐՈՒՄՆԵՐՆ ԱՎԵԼԻ ԵՆ ԽՈՐԱՑԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ դատական համակարգում ներքին խմորումներն ավելի են խորացել:

Խոսակցություններ են պտտվում, որ իրենց խաբել են: Բանն այն է, որ դատավորների ներքին խմբի խոսակցության բացահայտումից հետո, երբ առաջին հրաժարականի դիմումը ներկայացրեց ԲԴԽ անդամ, դատավոր Արշակ Վարդանյանը, տպավորությունն այնպիսին էր, որ թեման պետք է այս մեկ հրաժարականով փակված լիներ, քանի որ Արշակ Վարդանյանին խոստացել են իշխանական վերնախավից, որ նրա հրաժարականից հետո մյուս դատավորներին հանգիստ կթողնեն, սակայն նրանց նկատմամբ ճնշումները շարունակվել են ու հասել եւս երկու դատավորի՝ Կարեն Մարդանյանի եւ Սերգեյ Մարաբյանի հրաժարականին: Սպասվում է նաեւ Արագածոտնի մարզի դատավոր Անդրանիկ Մնացականյանի հրաժարականը:

Ասել է թե՝ Արշակ Վարդանյանին խաբել են:

Դատական համակարգում այս խառնաշփոթից հետո հարց է առաջանում՝ ինչո՞ւ մյուս դատավորների ճակատագրին չի հետեւում դատավոր Ռուբիկ Մխիթարյանը եւ ազատման դիմում գրում. միգուցե նրան այդ դատավորների ներքին խոսակցությունը իշխանական վերնախավին հասցնելու համար պաշտոն կամ այլ բան են խոստացե՞լ:

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ ուշագրավ գրագրություն է ի հայտ եկել, որտեղ վերոնշյալ դատավորները իրենց ներքին խմբում կոնկրետ քաղաքական իշխանության եւ նրանց կանանց հասցեին հայհոյանքներ են արել, ու դատավորներից մեկն այդ գրագրությունը հասցրել է քաղաքական իշխանություններին, ինչից հետո էլ հայհոյանքներ գրած դատավորներին ստիպում են ազատման դիմումներ գրել սեփական նախաձեռնությամբ ու հեռանալ համակարգից:

Ըստ մամուլում տարածված տեղեկությունների՝ գրագրությունը քաղաքական իշխանություններին հասցրել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ռուբիկ Մխիթարյանը, որն իշխանությունների «սրտի» դատավորն է, ու ամեն գնով ցանկանում են նրան տանել ԲԴԽ՝ որպես դատավոր անդամ: Իսկ ինչո՞վ է զբաղված ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը՝ ի դեմս նախագահ Կարեն Անդրեասյանի: ՀՀ սահմանադրական օրենքի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը Սահմանադրությամբ եւ օրենսգրքով սահմանված լիազորություններն իրականացնելու միջոցով երաշխավորում է դատարանների եւ դատավորների անկախությունը: Սակայն, իրականում Կարեն Անդրեասյանը ոչ թե պաշտպանում է դատավորների անկախությունը, այլ հենց նա է տարբեր ճանապարհով դատավորներին ճնշողներից մեկը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ

Ո՞Վ Է ՀԱՄԱԿԱՐԳԻ «ՀՈՒԴԱՆ»

Ըստ «Freedom House»-ի 2024 թվականի զեկույցի՝ «Անկախ դատական համակարգ» հարցով մեր երկիրը ստացել է ընդամենը 1 բալ՝ 4 հնարավորից: Նույն վիճակը «Քրեական եւ քաղաքացիական գործերով օրինական գործընթացի ապահովում» ցուցանիշով է՝ 1 բալ 4-ից: Միջազգային զեկույցի հեղինակներն արձանագրել են, որ «դատարաններն առնչվում են համակարգային քաղաքական ազդեցությանը, եւ դատական ատյաններն ախտահարված են կոռուպցիայով: Դատարանները ենթարկվում են ճնշումների դատախազների կողմից՝ հօգուտ մեղադրական դատավճիռների»: ArmLur.am-ը դատավոր Մեսրոպ Մակյանից հետաքրքրվեց, թե ծանոթ է արդյոք հեղինակավոր կազմակերպության զեկույցին. այնտեղ նշված է, որ դատարանները դատախազների կողմից ճնշվում են, որ մեղադրական վճիռներ կայացնեն: Վերջին անգամ ե՞րբ են նման ճնշում զգացել: Եվ, առհասարակ, իրենց հեռախոսը ստուգե՞լ են, ի՞նչ գրագրություն ունեն դատավոր կոլեգաների հետ, որ հրապարակելու դեպքում անհարմար վիճակում չհայտնվեն, քանի որ իրենց կոլեգաները գրագրության պատճառով ազատման դիմումներ գրեցին: Պարզել են, թե ով է դատական համակարգի Հուդան, որ գործընկերներին մատնել էր: Հիշեցնենք, որ դատական համակարգը լքում են դատավորներ գրագրության համար, որը հայտնվել է իշխանության ձեռքում:

ԵՐԵԽԱՅԻ ՊԱՏՃԱՌՈՎ

Ֆուչիկի փողոցի թիվ 6 հասցեի կրակոցներից մեզ մանրամասներ են հայտնի դարձել: Մասնավորապես, կրակոցները հնչել են երեխայի շուրջ առաջացած տարաձայնությունից: Վիճաբանողներից մեկի երեխային, որ առողջական խնդիրներ ունի, ծաղրել են, ու դեպքին խառնվել են ծնողները, արդյունքում հնչել են կրակոցներ: Shamshyan.com-ը գրել էր, որ մարտի 14-ին մարտաֆիլմ հիշեցնող կրակոցներ են հնչել Երեւանում: Ժամը 00:20-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Մաշտոցի բաժին ահազանգ է ստացվել 1-03 շտապօգնության կայանից, եւ հայտնել են, որ բժիշկների հերթապահ խումբը կանչով մեկնել է Ֆուչիկի փողոցի թիվ 6 հասցե, որտեղ հայտնաբերել են վիրավոր քաղաքացիների ու արնանման հետքեր: Վիրավորներին առաջինը օգնության են հասել բժիշկները, պարեկներն ու քաղաքացիները: Ոստիկաններն ու պարեկները դեպքի վայրում հայտնաբերել են տարբեր տեսակի հրազեններից արձակված մոտ մեծ թվով կրակված պարկուճներ, պայթեցված նռնակի դետալներ, արնանման հետքեր, կրակոցից վնասված ավտոմեքենաներ: Պարզվել է, որ դեպքի վայրից Երեւանի տարբեր հիվանդանոցներ են տեղափոխվել երկու քաղաքացի:Հիվանդանոցում բժիշկները ոստիկաններին եւ քննիչներին հայտնել են, որ վիրավորներն ի վիճակի չեն կատարվածի մասին բացատրություն տալու, քանի որ գտնվում են վիրահատարանում: Գ. Շամշյանի տեղեկություններով՝ ոստիկաններն ու քննիչները տաք հետքերով պարզել են դեպքի որոշ հանգամանքներ, եւ կան ենթադրյալ կասկածյալներ, որոնք որոնվում են: ArmLur.am-ի տեղեկություններով՝ երեկ իրավապահները կրկին դեպքի վայրում էին՝ լրացուցիչ զննություն իրականացնելու համար:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 14-ից 15-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 114 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՏՈՒԳԱՆՎԵԼ Է

Իջեւան քաղաքի Բլբուլյան փողոցի բնակիչ Արթուր Ալթունյանն Իջեւանի Մայիսի 28-ի 1/2 հասցեում առանց թույլտվության իրականացրել է հանրային սննդի գործունեություն, որի վերաբերյալ համայնքապետարանի աշխատակիցների կողմից 2024թ.-ի մարտի 4-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն: Իջեւանի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առեւտրի, սպասարկման եւ գովազդի բաժնի պետ Արարատ Պարոնյանը իրավախախտին վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար արձանագրությունը՝ կից զեկուցագրով, ներկայացրել է համայնքի ղեկավարին: Իջեւանի համայնքապետարանը, հիմք ընդունելով զեկուցագիրը եւ կից ներկայացված նյութերը, վարչական իրավախախտում կատարելու փաստի առթիվ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցել է վարչական վարույթ եւ վարույթի քննության օր նշանակել 2024 թվականի մարտի 14-ը՝ ժամը 12:00-ին, համայնքապետարանի շենքում եւ այդ մասին տեղեկացրել Արթուր Ալթունյանին: Ա. Ալթունյանը լսումներին չի ներկայացել: Մարտի 14-ին Իջեւան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանը որոշել է Արթուր Ալթունյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք (տույժ)՝ 80 000 ՀՀ դրամի չափով, նրան պարտավորեցնել դադարեցնել առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպումը:

ԱՂՔԿԱՆ ԴԱՏԻ Է ՏՎԵԼ

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Երվանդ Արաբաչյանը 2023թվականի դեկտեմբերի 27-ին Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան հայցադիմում է ներկայացրել՝ ընդդեմ Բերդ համայնքի Արծվաբերդ գյուղի բնակիչ, 1997թ.-ի օգոստոսին ծնված Լիլիթ Արագածի Չոբանյանի՝ տուժանքի գումարի բռնագանձման պահանջով: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2024թ. հունվարի 17-ի որոշմամբ հայցադիմումը ընդունվել է դատարանի վարույթ: Դատարանի նույն օրվա մեկ այլ որոշմամբ մերժվել է հայցի ապահովման միջոց կիրառելու մասին ՀՀ պաշպանության նախարարության միջնորդությունը: Այդ միջնորդությամբ պաշտպանության նախարարությունը դատարանից խնդրում էր Լիլիթ Չոբանյանին պատկանող գույքի վրա հայցագնի չափով արգելանք դնել: Մարտի 13-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Դիլիջան քաղաքի նստավայրում դատավոր Նանա Դալլաքյամը որոշել է սույն քաղաքացիական հայցով նախնական դատական նիստ նշանակել 2024թ. ապրիլի 25-ին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿՄԱՐԻ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԸ

Պետությունն ամբողջությամբ կմարի բաղաքացու տան հիփոթեքային վարկը, եթե տան նախահաշիվը չգերազանցի 16 մլն դրամը, եւ այն կառուցվի սահմանամերձ բնակավայրերում: Պարզելու համար՝ արդյոք բաղաքացիները հետաքրքրված են պետության կողմից առաջարկվող ծրագրին, ArmLur.am-ը կապ է հաստատել Վայոց ձորի մարզպետ Կոլյա Միքայելյանի հետ:

Սահմանամերձ գյուղական բնակավայրերում բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրում ընդգրկված են Վայոց ձորի 6 բնակավայր՝ Արենի համայնքի Արենի եւ Խաչիկ բնակավայրերը, Վայք համայնքի Բարձրունի, Նոր Ազնվաբերդ, Սերս եւ Խնձորուստ բնակավայրերը: Մարզպետ Կոլյա Միքայելյանի խոսքով՝ Վայոց ձորի մարզում 13.03.2024թ. դրությամբ Վայք համայնքի Բարձրունի բնակավայրում ծրագրից օգտնվելու համար դիմել են 8 քաղաքացի, որոնցից դեռ ոչ մեկ թույլտվություն չի ստացել, եւ դեռ չկա մեկնարկված շինարարական աշխատանքներ, Սերս բնակավայրի համար դիմել են 2 քաղաքացի, որոնցից մեկն է այս պահին թույլտվություն ստացել, սակայն դեռ շինարարական աշխատանքներ սկսելու թույլտվություն չեն ստացել, Նոր Արզնաբերդում դիմել են 3 քաղաքացի, Խնձորուստում՝ 5 քաղաքացի, որոնցից մեկն է դեռ թույլտվություն ստացել: Փոքր-ինչ շատ են դիմողների թիվը Արենի համայնքում: Ծրագրից օգտվելու համար Արենի համայնքի Արենի բնակավայրում դիմել են 69 քաղաքացի, որոնք բոլորն էլ ստացել են թույլտվություն, 41-ը արդեն իսկ ստացել են համապատասխան վարկը եւ բնակավայրում սկսված է 27 բնակարանի շինարարական աշխատանքները: Խաչիկ համայնքում դիմել են 10 քաղաքացի, բոլորն էլ թույլտվություն ստացել են, 6-ը՝ վարկ ստացել: Խաչիկ բնակավայրում այս պահին մեկնարկված է մեկ տան կառուցման աշխատանքներ: «Ակնկալվում է, որ մինչեւ ծրագրի ավարտը՝ 2025թ. դեկտեմբերի 30-ը, շահառուների թիվը կավելանա: Դրան կնպաստի Խաչիկ բնակավայրի 77 քաղաքացու վարկային պարտավորությունը մարելու մասին ՀՀ Կառավարության 29.02.2024թ. որոշումը»,- հավելեց Կոլյա Միքայելյանը: Նույն հարցումով դիմել ենք նաեւ Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանին, որը նշեց. «Սյունիքի մարզպետի աշխատակազմը սահմանամերձ գյուղական բնակավայրերում 16 մլն դրամ պետական աջակցությամբ տուն կառուցելու դիմումներ չի ընդունում, հետեւաբար, ծրագրին դիմողների մասին տեղեկություններ տրամադրել չենք կարող»: Հիշեցնենք, որ ծրագիրը գործում է Սյունիքի մարզի գ. Ագարակ, գ. Գեղանուշ, գ. Գոմարան, գ. Դավիթ Բեկ, գ. Դիցմայրի, գ. Եղվարդ, գ. Խդրանց, գ. Կաղնուտ, գ. Ներքին Հանդ, գ. Շիկահող, գ. Սզնակ, գ. Սյունիք, գ. Սրաշեն, գ. Վարդավանք, գ. Ուժանիս, գ. Ճակատեն, գ. Ծավ, գ. Բարգուշատ, գ. Խորձոր, գ. Խնձորեսկ, գ. Քարահունջ, գ. Հարթաշեն, գ. Ձորակ, գ. Ներքին Խնձորեսկ, գ. Աղբուլաղ, գ. Շուռնուխ, գ. Որոտան, գ. Վանանդ, գ. Բարձրավան, գ. Տեղ, գ. Արավուս, գ. Խնածախ, գ. Խոզնավար, գ. Կոռնիձոր, գ. Վաղատուր, գ. Քարաշեն, գ. Խոտ բնակավայրերում:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՃԱՊՈՆԻԱ

ԲԱԶՄԱԼՈՐՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Սոկի Յուտական վստահեցնում է՝ Ճապոնիայի կառավարությունը մեծապես հետաքրքրված է Հայաստանի հետ կապերի ամրացմամբ եւ հետագա խթանմամբ: Նա ընդգծեց՝ Հայաստանն ապրում է դժվար ժամանակներ, եւ Ճապոնիան ամուր կանգնած է իր գործընկերոջ կողքին՝ նրան ցուցաբերելով բազմաբերս ու բազմաոլորտ աջակցություն:

Դեսպանի կարծիքով՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից ներկայացված «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությունը միանշանակ կարող է նպաստել տարածաշրջանային ինտեգրացիոն պրոցեսներին:

«Ճապոնիան ունի որակյալ եւ բարձրակարգ ենթակառուցվածքներ, որոնք կարող են ներդրվել տարածաշրջանային մեգածրագրերի իրականացման գործում: Միջազգային տրանսպորտային միջանցքը, որը կապում է Եվրոպան Կենտրոնական Ասիայի ու հեռավորասիական տարածաշրջանի երկրների հետ, կարող է շահութաբեր լինել ինչպես Ճապոնիայի, այնպես էլ Հայաստանի համար: Մեր կառավարությունը հետաքրքրված է նաեւ Հարավային Կովկասով անցնող Հյուսիս-Հարավ միջանցքի շահագործմամբ, ուստի պատրաստ է քննարկել, հստակեցնել ու ընդլայնել այդ ուղղությամբ հետաքրքրությունների շրջանակը՝ գիտակցելով, որ տարածաշրջանային մեգա ծրագրերի իրականացումը, անշուշտ, բխում է Հայաստանի կենսական շահերից»,- ասաց Սոկի Յուտական:

Նա արձանագրեց, որ Հայաստանի եւ Ճապոնիայի միջեւ հարաբերությունները զարգանում են միաժամանակ մի շարք բնագավառներում, այդ թվում՝ հատկապես սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման եւ տնտեսական ենթակառուցվածքների զարգացման ոլորտներում:

«Փոխգործակցության օրակարգում կարեւոր տեղ է զբաղեցնում նաեւ Լեռնային Ղարաբաղից տեղահանվածներին անմիջական աջակցության ցուցաբերումը: Օժանդակելով համայնքներին, որտեղ նրանք տեղավորվել են՝ օգնում ենք նման ճակատագրի արժանացած մարդկանց: Այս պահին իրականացման փուլում է Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց հյուրընկալող համայնքների հիմնական ենթակառուցվածքների եւ սոցիալական ինտեգրման աջակցության ծրագիրը»,- նշեց դեսպանը:

Սոկի Յուտական հիշեցրեց, որ երկու տարի առաջ մեկնարկեց Ճապոնիայի կառավարության կողմից հաստատված «Մարդկային անվտանգության ծրագրերի» դրամաշնորհային մեծ նախագիծը, որի շրջանակում ճապոնական կողմի աջակցությամբ արդեն իսկ իրականացվել են բազմաթիվ ծրագրեր: Դրանցից են, օրինակ, Սպիտակի բժշկական կենտրոնին բժշկական սարքավորումների տրամադրման, Գեղարքունիքի մարզի հաշմանդամ երեխաների բարեկեցության հաստատությունների հասանելիության բարելավման, Սյունիքի մարզի Կավճուտ գյուղի ջրամատակարարման համակարգի կառուցման, Շիկահողինեւ հարակից գյուղերին շտապօգնության մեքենա տրամադրելու, Գյումրիում անապահով բնակչության համար գյուղատնտեսական ուսումնական կենտրոնի կառուցման, Արարատի մարզի Խարբերդի մասնագիտացված մանկատան բարեկարգման, Մարմաշեն գյուղում SS կենտրոնի ստեղծման, Շիրակի մարզի Վարդաքարի ջրամբարի բարեկարգման, Մալիշկա եւ Գետափ գյուղերում ոռոգման ցանցի ստեղծման ծրագրերը եւ նմանատիպ շատ այլ նախաձեռնություններ:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 12 պատահար. 18 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ԻՄ ՔԱՅԼԸ»

ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԸ՝ ՏՆՕՐԵՆ

Մարտի 13-ին եւ 14-ին տեղի է ունեցել «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի երկու արտահերթ նիստ՝ օրակարգում ունենալով հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի եւ գործադիր տնօրենի փոփոխության հարցերը:

Առաջին արտահերթ նիստով հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների միաձայն որոշմամբ խորհրդի նախագահ է ընտրվել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանը:

Մարտի 14-ի նիստում քննարկվել է հիմնադրամի գործադիր տնօրենի փոփոխության հարցը: Հոգաբարձուների խորհրդի նախագահի առաջարկությամբ եւ խորհրդի մյուս անդամների միաձայն որոշմամբ հիմնադրամի գործադիր տնօրեն է նշանակվել Աննա Հակոբյանը:

Աննա Հակոբյանը մինչեւ հիմնադրամի գործադիր տնօրեն նշանակվելը սեփական դիմումի համաձայն դուրս էր եկել Հոգաբարձուների խորհրդի կազմից եւ այդպիսով նա– թողել էր խորհրդի նախագահի պաշտոնը:

«Մխիթար Հայրապետյանի՝ նախարար նշանակվելուց հետո «Իմ քայլը» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված ծրագրերի անխափան իրագործումը եւ հիմնադրամի հետագա բնականոն գործունեությունն առավել արդյունավետ ապահովելու համար անհրաժեշտ է, որ ստանձնեմ հիմնադրամի գործադիր տնօրենի պարտականությունները՝ թողնելով Հոգաբարձուների խորհրդի նախագահի պաշտոնը եւ դուրս գալով Հոգաբարձուների խորհրդից:

Տնօրենի կարգավիճակն ինձ հնարավորություն կտա ավելի շատ ժամանակ տրամադրել ծրագրերի իրագործմանը, եւ այս մոդելի փորձարկումը հիմնադրամին նոր լիցք տալու նպատակ ունի նաեւ: Սա մեր գործերի տեսանելիությունը, հաշվետվողականությունն ու թափանցիկությունն ապահովելու լրացուցիչ գործոն կդառնա:

Շնորհակալ եմ հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին այս տեսլականը կիսելու, գործադիր տնօրենի կարգավիճակն ինձ վստահելու, եւ Մխիթար Հայրապետյանին՝ հոգաբարձուների խորհրդի նախագահությունը ստանձնելու համար: Ընթացիկ ծրագրերի արդյունավետ իրագործումն ապահովելուն զուգընթաց կփորձենք ռազմավարական նոր ծրագրեր մեկնարկել:

Կրկին շնորհակալություն եմ հայտնում հիմնադրամի բոլոր նվիրատուներին»,- հոգաբարձուների խորհրդի նախագահի եւ անդամի կարգավիճակը թողնելը եւ հիմնադրամի տնօրեն նշանակվելը մեկնաբանել է Աննա Հակոբյանը:

ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃԸ ՓԱԿ Է

ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ԸՆԴՈՒՆԵԼ ԴԱՀԼԻՃԸ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի ուսանողները ահազանգում են, որ ինստիտուտի դահլիճներից մեկն արդեն 1 տարուց ավել է՝ փակ է եւ չի բացվում, որպեսզի իրենք մարզումներն իրականացնեն:

2022 թվականի մարտի 14-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարությունում ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանի եւ ինստիտուտի ռեկտորի միջեւ ստորագրվել է պայմանագիր: Արդյունքում Ճապոնիայի կառավարությունը Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտին ձյուդոյի եւ կարատեի մարզադահլիճները վերանորոգելու համար հատկացրել է շուրջ 91 հազար ԱՄՆ դոլար դրամաշնորհ:

Եվ, ահա, շինաշխատանքներն ավարտվել են 2023թ. մարտի վերջին, շինարարական աշխատանքներն իրականացվել են նախագծին ոչ համապատասխան, էական փոփոխություններով, կատարված փոփոխությունների մասին տեղեկատվությունը Ճապոնիայի դեսպանատանը ներկայացվել է միայն աշխատանքներն ավարտվելուց հետո: Էական փոփոխություններով կատարված աշխատանքների գնահատումն այս պահին գտնվում է դեսպանատան ուսումնասիրության փուլում: Դեսպանատան աշխատակիցները եկել են Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտ, որպեսզի գնահատեն կատարված աշխատանքները, եւ հասկանան՝ արդյոք հատկացված գումարը նպատակային է ծախսվել, ու հանձնեն դահլիճը ուսանողներին՝ պարապունքներ իրականացնելու համար, սակայն դեսպանատունը հրաժարվել է ընդունել դահլիճը եւ վերանորոգումը համարել է ոչ պատշաճ իրականացված. դահլիճը 1 տարի է՝ փակ է: ArmLur.am-ի նկարահանող խումբը Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտում էր: Զրուցել ենք ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Տիգրան Սիմոնյանի հետ, նա ներկայացրել է մանրամասները:

Դատելով իրավիճակից՝ դեպքին պետք է ընթացք տան ՀՀ իրավապահ մարմինները՝ի դեմս գլխավոր դատախազության, քանի որ կասկածներ կան, որ գումարներ են յուրացվել եւ ըստ նպատակի չեն ծառայել:

ArmLur.am-ի հետ զրույցում Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի հայկական պետական ինստիտուտի նախկին ռեկտոր Դավիթ Խիթարյանը եւս արձագանքել է իրավիճակին. «Տիգրան Սիմոնյանի ասածը ես անբարոյականություն եմ համարում, դեսպանատան անունից միայն դեսպանատունը կարող է խոսել, ասում են՝ դեսպանատունը դեռ ստուգումներ չի արել. եթե չի արել, իրենք ո՞նց են գնահատական տալիս: Դրամաշնորհային ծրագրում տեխզննող կազմակերպություն կա, արդյոք այդ կազմակերպությունը եզրակացություն տվե՞լ է. եթե չի տվել, իրենց ի՞նչ հիմքով են բարձրաձայնում այս ամենը: Ամենը սուտ է ու զրպարտություն: Այո, շատ խնդիրներ կան, ու ես տեղյակ եմ դրանցից, այդ խնդիրները շտկման փուլում էին: Հաշվի առնելով, որ 2023թ-ից իմ լիազորությունները կասեցված են եղել, իմ մեղքի բաժինը կամ չկա, կամ էլ եթե կա, չի համապատասխանում իրեն: Իմ տեղեկություններով՝ խնդիրները կապված չեն ո՛չ որակի, ո՛չ ֆինանսի հետ: Խնդիրն այն է, որ ժամանակին նախագծի նախահաշվարկից շեղում է եղել, ու ժամանակին չի տեղեկացվել Ճապոնիայի դեսպանին: Դրամաշնորհային ծրագրի համակարգողը եղել է արտաքին կապերի եւ ռազմավարական ծրագրերի գծով պրոռեկտոր Նուշիկյան Անժելան եւ միջազգային բաժնի ղեկավար Արմինե Սարգսյանը. իրենց ոչ կոմպետենտության արդյունքում ունեցել ենք այս խնդիրները: Իմ տեղեկություններով՝ նրանց ոչ կոմպետենտության պատճառով նախագծա-նախահաշվարկային ինչ-որ շեղումներ են եղել, իսկ նրանք ժամանակին չեն զեկուցել Ճապոնիայի դեսպանատանը. սա է եղել հիմնական սխալը: Բացի սա, Արմինե Սարգսյանի ոչ կոմպետենտության պատճառով բուհը նաեւ կրել է շատ վնասներ, քանի որ Ճապոնիայի դեսպանատունը թույլտվություն տվել էր, որ մեր դոլարային հաշվին նստած գումարը կարողանայինք դրամի վերածել, բայց Արմինե Սարգսյանն ասել է, որ դեսպանատունը թույլ չի տալիս: Դոլարի կուրսի կտրուկ անկումը, եթե չեմ սխալվում, մի քանի միլիոն դրամի վնաս է տվել բուհին: Ըստ պայմանագրի՝ եթե ինչ-որ խնդիրներ են առաջանում, դրանք բուհը պետք է իր միջոցներով լուծի»,-ասաց նա:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«ԳՈՐԾԻ ՏԵՂ ՉԿԱ»

ԱՇԽԱՐՀԻՑ ԿՏՐՎԱԾ ՄԻ ԿԵՏ

ArmLur.am-ը հաճախ է բողոքներ ստանում Արագածոտնի մարզի Թալին քաղաքի բնակիչներից. խնդիրն այն է, որ շատ բնակիչներ չեն կարողանում աշխատանք գտնել իրենց մարզում եւ ստիպված են մեկնել այլ երկիր՝ աշխատանքի՝ հեռու լինելով իրենց ընտանիքից:

«Էն ժամանակ բանկեր կար, հիմա կեսը փակեցին, տարան Աշտարակ, էդ ոլորտի մարդիկ մնացին անգործ, ու տենց լիքը տարբեր աշխատատեղեր: Հենց քաղաքի մեջ գոնե մի մասը կարողանում է գործ գտնել, բայց գյուղերում ընդհանրապես գործի տեղ չկա. էդ մարդիկ են հիմնականում ստիպված գնում այլ երկիր: Թալինը ոնց որ աշխարհից կտրված մի կետ լինի»: ArmLur.am-ը կապ հաստատեց Թալինի համայնքի ղեկավար Տավրոս Սափեյանի հետ՝ հասկանալու համար՝ ինչ միջոցներ է ձեռնարկվում աշխատատեղեր ստեղծելու համար. «Առհասարակ, ամբողջ Հայաստանում կա աշխատատեղի խնդիր: Ես 1 տարի է՝ համայնքի ղեկավար եմ, եւ փորձում եմ շատ տարբեր հանդիպումներով այնպես անել, որ աշխատատեղեր բացվեն: Չեմ ուզում խոսակցությունից առաջ ընկնել, հիմա այն փուլում ենք, որ տրիկոտաժի արտադրամաս ենք փորձում բացել»: Տավրոս Սափոյանը մեզ հետ զրույցում չցանկացավ այլ մանրամասներ հանրայնացնել, սակայն նշեց, որ տարբեր մարդկանց հետ բանակցությունների մեջ է աշխատատեղերի բացման գործով:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԶԳԻ ԹԱՄԱՐԱ ԽԱՆՈՒՄ

Ի՞ՆՉ ԴԵՐ ՈՒՆԻ ԲԱԼԵՏԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ուզբեկստանի ամենահայտնի բալետային դարուհի, երգչուհի, բալետմայստեր եւ ԽՍՀՄ եւ Ուզբեկստանի ժողովրդական արտիստուհի Թամարա Խանումն է հիմնադրել երկրի երաժշտադրամատիկական թատրոնի բալետային ստուդիան: 1906 թվականի այս օրը Ուզբեկստանի Ֆերգանա քաղաքում ադրող հայ ընտանիքում ծնվել է Թամարա Արտեմի Պետրոսյանը՝ նույն ինքը Թամարա Խանումը: Առաջա բալետմայստերն առաջին անգամ մեծ բեմ է բարձրացել 12 տարեկանում, իսկ երեք տարի անց ընդունվել Տաշքենդում գործող ռուսական բալետի դպրոց, սովորել Մոսկվայի թատերական ինստիտուտում:

Տաշքենդ վերադառնալուց հետո երգչուհին գործունեությունը սկսում է երաժշտական-էթնոգրաֆիկ անսամբլի կազմում, միաժամանակ զարկ տալիս տեղի ազգային երգի ու պարի, ինչպես նաեւ Ուզբեկստանի առաջին օպերային թատրոնի հիմնադրման աշխատանքներին: Կենտրոնական Ասիայում մեծ համբավ ձեռք բերելուց հետո Թամարան շրջագայություններով մեկնում է Եվրոպա, 1935 թվականին Լոնդոնում մասնակցում ազգային պարերի առաջին միջազգային փառատոնին՝ արժանանալով պատվավոր առաջին մրցանակին եւ Մեծ Բրիտանիայի թագուհու կողմից պարգեւատրվում Ոսկե մեդալով: Ելույթներով հանդես է գալիս Փարիզում, Բեռլինում, Վիեննայում եւ այլ քաղաքներում գործող մեծ դահլիճներում: Նա իր ստեղծագործական եւ բեմական գործունեությունը չի դադարեցրել անգամ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Եվրոպայից վերադառնալուց հետո Թամարան խումբ է կազմում եւ ելույթներով հանդես գալիս պատերազմի առաջին գոտում՝ լինելով առաջին կինը, որն արժանացել է կապիտանի կոչման եւ Ստալինի 2-րդ աստիճանի մրցանակի: Արժանացել է «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ հաղթանակի» եւ «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում քաջարի աշխատանքի» մեդալների: Հակառակ ուզբեկական մշակույթի կրող լինելուն՝ Թամարա Խանումը իր բեմելների ընթացքում գրեթե միշտ հանդես է եկել հայկական երգերի կատարմամբ: 1988 թվականի Սպիտակի երկրաշարժից հետո երգչուհին իր ողջ կարողությունը նվիրաբերել է ավերիչ երկրաշարժիչ տուժածներին՝ ոչինչ չթողնելով իր դուստրերին եւ նրանց ընտանիքներին: Արվեստի ոլորտում եզակի մարդկանցից է Թամարա Խանումը, ում տուն-թանգարանը բացվել է դեռեւս իր կենդանության օրոք: 1986 թվականին Տաշքենդում բացված թանգարանում ցուցադրվում են պարուհու բեմական հագուստները, լուսանկարները եւ չիրատարակված հուշերը: Այնտեղ կարելի է լսել նաեւ հայ արտիստուհու երգերը:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳ

«Մշակույթի զարգացման» հիմնադրամի կողմից մշակույթի ոլորտում կներդրվի կառավարման նոր համակարգ, առավել արդյունավետ կդառնա մշակութային ժառանգության հանրահռչակումը: Այս նոր նախաձեռնությամբ նախատեսվում է բարելավել մշակութային ոլորտում կառավարման համակարգը, ինչպես նաեւ ունենալ միասնական վարչատնտեսական կառավարման մոդել: Այս մոդելն առաջին փուլում իրականացվելու է թանգարանների համար: ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը նշեց, որ նոր մոտեցմամբ բավականին բեռնաթափվելու է թանգարանների ծանրաբեռնվածությունը:

«Սա, կարելի է ասել, թանգարանների կառավարման մոդելի փոփոխություն է: Հիմնադրամն իր վրա կվերցնի վարչատնտեսական գործառույթներ, կաջակցի լոգիստիկ հարցերում՝ բեռնաթափելով ծանրաբեռնվածությունը: Հիմնադրամը թանգարաններին կարող է աջակցել կապիտալ բնույթի աշխատանքներ իրականացնելու ժամանակ, տարբեր միջոցառումներ իրականացնելիս»,-ասաց Ալֆրեդ Քոչարյանը:

Հիմնադրամի կարեւոր գործառույթներից է լինելու նաեւ մշակութային ժառանգության հանրահռչակումը: Նպատակ կա մեկտեղելու բոլոր հնարավոր ռեսուրսները, մարքեթինգային հնարավորությունները:

«Երբ մենք գույքագրում էինք ոլորտում առկա խնդիրները, տեսանք, որ առաջնահերթություններից է մշակութային ժառանգության հանրահռչակումը: Մեր մշակութային ժառանգությունը շատ հարուստ է, եւ այն ճիշտ ներկայացնելու արդյունավետ ճանապարհներ են պետք: Օրինակ՝ այսօր թանգարաններում չունենք բալանսավորված այցելություններ: Ունենք Երեւանից դուրս արգելոց-թանգարաններ, որտեղ գրանցվում են մեծ թվով այցելություններ, կա Երեւանի սրտում գտնվող թանգարան, որտեղ քիչ թվով այցելություն է գրանցվում: Մենք կարծում ենք, որ բոլոր թանգարաններն էլ կարեւոր են, եւ պետք է հանրահռչակման միջոցառումներով կարողանանք այցելություններ ուղղորդել այդ թանգարաններ»,-ասաց Ալֆրեդ Քոչարյանը:

Նախարարի տեղակալի խոսքով՝ շատ կարեւոր են մարքեթինգային գործողությունները, մեդիա դաշտի հետ աշխատանքի, սոցիալական ցանցի առաջխաղացման, որակյալ կոնտենտ ստեղծելու հնարավորությունները մեկ տեղում համախմբելը: Հիմնադրամի միջոցները լինելու են պետական բյուջեից:

Ալֆրեդ Քոչարյանը նկատեց, որ ոլորտում եւս մեկ կարեւոր իրադարձություն է տեղի ունեցել: Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Թանգարանների մասին» օրենքը: Առաջին անգամ անկախ Հայաստանի պատմության մեջ թանգարանների ոլորտն ունեցավ իր կարգավորող հիմնական մայր օրենքը:

ՄԱՐԶԱԿԱՆ

«American Cup 2024»

Հայազգի երկու շախմատիստներ՝ Լեւոն Արոնյանը եւ Սամուել Սեյանը, մասնակցում են «American Cup 2024» շախմատի մրցաշարին:

Հայաստանի շախմատի տղամարդկանց թիմի նախկին առաջատար Լեւոն Արոնյանը, որն այժմ հանդես է գալիս ԱՄՆ դրոշի ներքո, դուրս է եկել ԱՄՆ գավաթի խաղարկության կիսաեզրափակիչ, որտեղ մրցում է Ֆաբիանու Կարուանայի հետ: Երկու պարտիաներից հետո հաշիվը հավասար է՝1:1: Սամուել Սեյանը քառորդ եզրափակիչում դուրս է մնացել հետագա պայքարից:

Մարտի 12-ից 21-ը ԱՄՆ Սենթ Լուիսում անցկացվում է «American Cup 2024» շախմատի մրցաշարը: Մրցաշարի ընդհանուր մրցանակային ֆոնդը կազմում է 250,000 հազար դոլար: Մրցաշարին մասնակցում են նաեւ Ֆաբիանո Կարուանան, Ուեսլի Սոն, Լենիեր Դոմինգեսը, Ռեյ Ռոբսոնը, Սամուել Շանկլանդը եւ Գրիգորի Օպարինը:

ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՎԱՔ

Հայաստանի ֆուտբոլի Մ-21 հավաքականը մարտի 17-26-ը կանցկացնի մարզական հավաք, որի ընթացքում ՈՒԵՖԱ Եվրոպայի Մ-21 2025թ. առաջնության որակավորման փուլի շրջանակում կկայանա երկու հանդիպում:

Այս մասին հայտնում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան: Մարտի 22-ին թիմը Պոդգորիցայում կմրցի Չեռնոգորիայի Մ-21 հավաքականի, իսկ մարտի 26-ին Արմավիրում՝ Ռումինիայի Մ-21 հավաքականի հետ:

Մ-21 հավաքականի գլխավոր մարզիչ Արմեն Գյուլբուդաղյանցը հավաքին հրավիրել է հետեւյալ ֆուտբոլիստներին.

Դարպասապահներ

Գոռ Մատինյան -ԲԿՄԱ
Վլադ Չատունց -«Ալաշկերտ-2»
Դավիթ Դավթյան -ԲԿՄԱ

Պաշտպաններ

Համլետ Մնացականյան -«Շիրակ»
Ավենտիս Ավենտիսյան -«ՆԿ Յարուն» (Խորվաթիա)
Պետիկ Մանուկյան -ԲԿՄԱ
Էրիկ Սիմոնյան -«Ուրարտու»
Արմեն Սարգսյան -ԲԿՄԱ
Ռուբեն Աբրահամյան -ԲԿՄԱ
Խարիտոն Այվազյան -«Ուրարտու»

Կիսապաշտպաններ

Նարեկ Ջանոյան -ԲԿՄԱ
Կարեն Նալբանդյան -«Ալաշկերտ»
Նարեկ Ալավերդյան -«Արարատ-Արմենիա»
Սերոբ Գալստյան -«Արարատ»
Գոռ Մանվելյան -«Նոա»
Կառլեն Հովհաննիսյան -ԲԿՄԱ
Համլետ Սարգսյան -ԲԿՄԱ
Էդգար Փիլոյան -«Վան»
Տիգրան Ավանեսյան -«Բալթիկա» (Ռուսաստան)
Վյաչեսլավ Աֆյան -ԲԿՄԱ
Նարեկ Հովհաննիսյան -ԲԿՄԱ
Գեւորգ Տարախչյան -«Ուրարտու»

Հարձակվողներ

Լեւոն Վարդանյան -«Փյունիկ»
Նիքոլաս Կալուկյան -«Սիրաքյուզ» (ԱՄՆ)

●Մարտի 26-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա «Սամվել Երվինյան. 50 տարի ջութակի հետ» համերգը: Տոմսերի արժեքը՝3000-20000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:30-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ իրավունքներ եւ պարտականություններ ունեն ապաստան հայցողները:

Ստեփան Գրիգորյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ապաստան հայցողները Հայաստանում ազատ տեղաշարժի, աշխատելու, կրթության, անվճար իրավաբանական խորհրդատվություն ստանալու, անվճար բուժօգնություն ստանալու եւ մի շարք այլ իրավունքներ ունեն:

Նրանք իրենց իրավունքներից օգտվելիս պետք է հարգեն ՀՀ քաղաքացիների, այլ անձանց օրինական շահերը, իրավունքները եւ ազատությունները, պահպանեն հասարակական կարգը, ՀՀ անվտանգությունը:

*ՀՀ ՆԳՆ միգրացիայի
եւ քաղաքացիության ծառայություն*

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ապաստան հայցողները պարտավոր են համագործակցել Միգրացիոն ծառայության հետ, տրամադրել հավաստի ու ճշմարիտ տեղեկություններ, վճարել բոլոր տեսակի հարկերն ու տուրքերը, ինչպես Հայաստանի քաղաքացիները: Նրանք պարտավոր են պահպանել Հայաստանի օրենսդրության պահանջները:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է իրականացվում մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումը:

Արամ Սողոմոնյան (48 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումն իրականացվում է՝ ՀՀ կառավարության 2007 թ. հունիսի 1-ի N 827-Ն որոշման պահանջների համաձայն:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մշակութային արժեքներ ժամանակավոր ներմուծելիս հայտատուն մաքսային մարմին պետք է ներկայացնի հայտարարագիր, մշակութային արժեքներն ու դրանց լուսանկարները /3 օրինակ/: Մաքսային մարմնում համապատասխան ընթացակարգով ձեւակերպվում է մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումը՝ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմը կորուստներ ունի Կոսովոյի դեմ ընկերական խաղից առաջ:

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի պաշտպան Նաիր Տիկնիզյանը «Լոկոմոտիվ»-ի կազմում ստացած վնասվածքի պատճառով չի միանա ազգային հավաքականին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	- 4 - 7 / + 4 + 9
Կոտայքի լեռներ	- 8 - 10 / + 5 + 8
Կոտայքի նախալեռներ	- 5 - 8 / +10 + 13
Գեղարքունիք	- 8 - 13 / + 3 + 6
Լոռի	- 6 - 10 / + 8 + 10
Տավուշ	- 4 - 7 / + 8 + 11
Արագածոտնի լեռներ	- 8 - 12 / + 3 + 6
Արագածոտնի նախալեռներ	- 5 - 7 / + 8 + 11
Արարատ	- 4 - 7 / +11 + 13
Արմավիր	- 4 - 8 / +10 + 13
Վայոց ձորի լեռներ	- 3 - 7 / + 3 + 6
Վայոց ձորի նախալեռներ	- 3 - 7 / +10 + 13
Սյունիքի հովիտներ	- 4 - 7 / +11 + 14
Սյունիքի նախալեռներ	- 9 - 13 / + 7 + 10
ԼՂՀ	- 9 - 10 / + 7 + 10
Երեւան	2 - 4 / + 9 + 13

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.3.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*